ՍԱՔՈ.– (Չիբուխն է լցնում։ Սաստիկ տարուած է պատմելու մարմաջով։ Ամենքն սպասում են հետաքրքիր։ Վառում է չիբուխը, փսփսացնում եւ սաստիկ մեծամիտ ձայնով սկսում) Էն է, ախպեր ջան, ախպորս որ ասեմ, ձիս նստել գնում էի Դումանլու, Չամլըբել։ Էնպէս գիշերուայ դառը կէսը կը լիներ, մին էլ տեսա, որ ընկել եմ Ղարանլուխ Մեշի Ջահանդամ-դարասին։ Հիմի, ախպեր ջան, ականջս ձենի՝ ձիուն հարաքեաթ, ղամշուն բարաքեաթ՝ գնում եմ։ Ամա մի մթնագիշեր էլ է, որ աչք աչքի չի գալի։ Մին էլ մի ձեն ընկաւ ականջս։ Ասի, եա գազան է, եա աւազակ։ Ականջ դրի, որ գազանի, աւազակի բան չի, սելաւի պէս գալիս է։ Այ տղա, էս ինչ բան է։ Էս մըտքով էի, մին էլ տեսնեմ ի՞նչ, մի զօրք է գալի, մի զօրք է գալի, ոնց որ ղիամաթ։ (Ունկնդիրները սարսափով նայում են) Ձեն տուի, ադա էդ ո՞ւմ զօրքն է։ Ձեն չտուին։ Էն է թուրս պլոկեցի, ձիս կրակեցի, ընկա էդ զօրքի մէջը ու սկսեցի ղամշիլը։ (Չիբուխն է փսփստացնում եւ թութունը դրստում։)

ՈՍԿԱՆ.– (Ներս է մտնում ձախից եւ տեսնելով, որ ամենքը զբաղուած են՝ չխանգարելու համար զգոյշ մօտենում է Սաքոյին եւ հետեւը կանգնում։ Ապա տեսնելով Նազարին՝ ճանաչում է եւ զարմանում, դրդում իր մօտ նստած հիւրերից մէկին) Ո՞վ է։

ՄԻ ՀՅՈՒՐ.– Քաջ Նազարն է,

ՈՍԿԱՆ.– (Սարսափած նայում է Նազարին եւ լռում։)

ՍԱՔՈ.– Էդպէս ղամշեցի մի վախտ, մին էլ տեսնեմ մթան մէջ մի ձիաւոր ձեն է տալիս։ «Սախկալ-Թութան, Ջամուշ-Պատռան, խփի՛»։

ՆԱԶԱՐ.– (Կիսովի վեր է կենում տեղից պատրաստուելով փախչել։ Միւսների ուշքը Սաքոյի վրայ է։)

ՍԱՔՈ.– Էս իմանալս էր։ Որ ձիս չթռցրի՞, չհասա՞ ու սրան հենց էսպէս ձեռքով ձիախառն գետին չզարկի՞ …

ՆԱԶԱՐ.– (Այլայլւում է) Բը՛, բը՛, բը՛, բը՛։

ՈՍԿԱՆ.– (Անհանգիստ նայում է Նազարին։)

ՍԱՔՈ.– Սա փաթաթուեց ոտիս ու մենակ էսքանը գոռաց. «Ա՛ման, Քեօ՛ռօղլի, բա՛շխի»։ Տո , քու Քեռօղլու ըսենց ընենցը… Ախպեր ջան, սրան գցեցի ոտքերիս տակ, ը՛մ, հիմի ո՞նց եմ տալի փորին, գլխին, մէջքին… մէջքին, փորին, քթին… շինեցի քիւֆթա… էստեղ լուսնեակը դուրս եկաւ։ Մտիկ տուի որ՝ Քաջ Նազարն է։

ԲՈԼՈՐԸ.– (Շփոթուած) Ա՛յ տղա, այ տղա… դե՛սը, դե՛սը… (Հազում են։)

ՈՍԿԱՆ.– Հա՛, էն մեր բանն ես պատմում…

ՍԱՔՈ.– Շինեցի քիւֆթա… (Հանկարծ նկատելով Ոսկանին) Հա , հա՛.. .